

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ


Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ Իրագրի

ԳԱՂԱՔԻ (Եգիպտոս)

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHA LOUISE
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրանքն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐԻՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻՒԿ
Եւ թղթատարի ծախքը
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Դ .

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ

Տեսանք որ հանրութեան վերաբերեալ
ամեն ձեռնարկ կամ երկ կրնայ և պէտք է
քննադատուի : Տեսանք որ ամեն անհատ ա-
զատ է , և՛ յանուն և յօգուտ իր ընկերնե-
րուն՝ բարոյապէս պարտաւոր է այդ ձեռ-
նարկն ու երկը քննադատելու : Արդ թող
մեզի ներուի շանակ իմաստասիրելու՝ միշտ
համառօտաբար՝ նկարագիրը այն գործողին
կամ գործին , որ ժողովուրդին կը ներկայա-
նայ « Հանրային Գործիչ » շնորհալից տիտ-
ղոսով :

Իսկոյ նախ ի՞նչ պէտք է հասկնալ այս
երկու բառերէն : Հանրութեան համար գոր-
ծող , թէ՛ հանրութեան յատուկ գործող :

Առաջին պարագային մէջ որ և է մէկը
կրնայ առարկել .

— Ես , որ հանրութեան մէկ անդամն
եմ , չ'եմ կրնար ընդունիլ որ դու ինծի հա-
մար գործես՝ վասնոր համարիտ չ'եմ քեզի :

Իսկ երկրորդ պարագային մէջ գործիչը
գործիք մ'եղած կ'ըլլայ հանրութեան ձեռ-
քը , որ զայն ուղղածին պէս կը ձեռնու կը
զարձնէ :

Ուրեմն անիմաստ տիտղոս մ'է դա զոր
ոմանք յոխորտալով կ'առնեն իրենց վրայ ,
իբրև ակնապարար զարդ մը :

Այդ անիմաստութիւնն ու յոխորտան-
քը աւելի կը շեշտուին , եթէ խորհինք որ
երկրիս վրայ չ'կայ անհատ մը որ « Հանրա-
յին Գործիչ » չ'ըլլայ : Երկրագործը՝ որ կը
հերկէ ու կը ցանէ . մշակը՝ որ կը հնձէ . հո-
վիւր՝ որ կ'արածէ . աղքատը՝ որ կ'աշխատի .
գրամատէրը՝ որ կը հանդիսի . զինուորը՝ որ կը
պատերազմի . վեհապետը՝ որ հրամաններ
կ'արձակէ , հանրային գործիչներ են . այսին-
քըն՝ հանրութեան համար կը գործեն , կամ
հանրութեան յատուկ գործողներ են :

Նոյն իսկ անասունները հանրային գոր-
ծիչներ են :

Սահմանը թէ և աւելի համեստ , բայց ի-
մաստը աւելի հասկանալի և աւելի տրամա-
բանուած է « արտասահմանի կամ ներքին
գործիչ » բառերուն , զոր կը գործածեն մեր
յեղափոխականները :

Սա ալ կայ որ այս « Հանրային Գործիչ »
բառերը հոս՝ Գահիրէի մէջ՝ լսեցինք մի քա-
նի անձանց բերաններէն . գէթ չ'ենք յիշեր
թէ այլուր լսած կամ կարդացած ըլլանք :

Այս հակիրճ քննասիրութենէ ետքը ,
գառնանք մեր նիւթին , և որովհետեւ եզրիպ-

տական հողին վրայ կը գրենք , յիշեալ եր-
կու բառերուն տանք առժամանակ այն ի-
մաստը , զոր կը սիրեն Վրոյր և Ընկերու-
թիւն , և որու միջոցաւ ոմանք վարագուրել
կ'ուզեն իսկ մը կանխամտածեալ յղացում-
ներ՝ օգտաշատ կամ վնասակար :

Արդ « Հանրային Գործիչ » կը նշանակէ
Գահիրէի մէջ՝ հանրութեան օգտին աշխատող
անձնուրաց մարդ :

Ուստի սոյն « առուր պատշաճի » իմաս-
տին վրայ պիտի շարունակենք մեր տեսու-
թիւնը :

Թէպէտ ընդհանուր առմամբ՝ ամեն ան-
հատ կրնայ գործել յօգուտ հանրութեան ,
բայց՝ մասնաւորապէս՝ մարդկութեան չորս
դասակարգը կը պատրի յարածամ գրազել
այդ պաշտօնով :

Առաջինն է՝ ընտանեաց հայրը . երկ-
րորդն է՝ ուսուցիչը , երրորդն է քահանայն
և չորրորդն է՝ հրապարակագիրը : Կայ նաև
հինգերորդ դասակարգ մը , որ վերջին օրե-
րս ծնունդ առաւ մեր մէջ , մեծ դեր խա-
ղաց , և՛ ըստ երեւութին՝ կոչուած է աւելի
մեծ դերեր կատարելու ապագայի մէջ . այդ
է՝ յեղափոխականը :

Ընտանեաց հօր պարտականութեանց
վրայ արդէն համառօտաբար խօսուած է մեր
« Չկնորսին » մէջ , և քահանային պարտիքը
ուրուագծուած են մեր ուրիշ մի գործին
մէջ , զոր մտադիր ենք հրատարակելու ի մօ-
տոյ : Ուստի այսօր երկու խօսք միայն պի-
տի ընենք ուսուցչին և հրապարակագրին ,
և անցողաբար՝ յեղափոխականին վրայ՝ հան-
րութեան երեք երկրներանգ գործիչները ,
որոնք՝ կարելի է ըսել՝ մարդկութեան բազ-
մը կը բռնեն իրենց ձեռքերուն մէջ :

(Շարունակելի) Գ :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵԱՆՔԸ

ԿԻՆԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻԱՆ ՄԷՉ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Երբ պահ մը դուրս ելլինք պատմական շը-
ջանակէն ի ինքիք ուրիշ արժանիքներու , կ'ըզ-
մայլինք երեւակայելով նշանաւոր մտքերու այն
երկար շարքը զոր արտադրած է Պոթոն անանկ
որ աւելի և մեծարանքի գեղեցիկ յատկու-
թեանց ծայրայեղութեամբը , տեսակ մը փոխա-
գարձ սքանչացման մեծ ընկերութիւն գարձած է
ան :

Անթիւ մանրագէպեր կը պատմուին հոս
Լովելի , Հուիթի , Պանքրֆիթի , Չաննիսի և
ուրիշ բանաստեղծական ու գրական տաղանգ-
ներուն վրայ . միւս կողմէ տեսակ մը բարե-

պաշտօն յարգանքներով հոս . կը հանդիպու կի-
սարձանի մը կամ արձանագրութեան մը , որ կը
նշանակէ բազաբին այն կէտերը ուր Յորանքին ,
Ուէպթըր եւ նմաներ ծնած են :

Երեւելի մեռելներու ներկայութիւնը , ո-
րոց յիշատակին այնքան եռանդուն և յարա-
տու մեծարանք մը ձօնուած է , կ'օժտնալէ
Պոթոնի տալու յատկանշանական հանդիսաւո-
րութիւն մը :

Եթէ Մասաչուսէթ եւ մասնաւորապէս
Պոթոն իրաւամբ հպարտ են իրենց ծնունդ
տուած մեծ մարդերով , ոչ նուազ սակայն պա-
տիւ ու պարծանք կ'ըզան ծնած ըլլալով կիւն-
րու խումբ մը , որոց համարժէքը այլուր գտնել
գժուարին պիտի ըլլար :

Գաղթային սկզբնական թուականէն հետէ
վեր կը հանեն անուններ , որոնք յար շրջագծ-
ուած կը մնան արութեան առաքինութեան ու
անձնուիրութեան լուսապակով մը , առ իրենց
նոր Հայրենիքը : Իսէր համառօտութեան պիտի
բաւականանամ ըսելով թէ՛ այս կիւնքը , որոց
անուններուն շարքը շատ երկար պիտի ըլլար ,
իրենց կորովով եւ անձնական զեղոյութիւննե-
րով ոչ նուազ օգնած են անկախութեան հաս-
տատման . ամեն դիւցազնի յարկին մէջ դիւցազ-
նուէտոյ մը կը հանդիպու , որու վեհ , բարձր նկա-
րագիրը յաճախ տղերսն իսկ եղած է ամուս-
նոյն կամ եղբորը հերոսութեան . միայն իբր ընդ-
հանուր օրինակ . երկու հատ յիշելու համար , ան-
ուանենք Մրս . Բըլինկ , մին ամենէն դիւցազնա-
կան դէմքերէն , որ ինքը եւ իւր բարեկամները
վայրի անասուններու մորթերով հողուեցան
անգղիական ապրանքներ չի գնելու համար :

Տէպօրա Սամսըն , որ կիւն մ'է զարձեալ , հե-
րոսաբար կոռեցաւ յեղափոխական բանակի
կարգերուն մէջ . բայց ինչ հարկ անցեալին դի-
մելու , դեռ երէկ էր , երբ Սպանիական պատե-
րագրին տրիւն , շատ մը կիւնք խնդրեցին որ
թոյլ տրուի իրենց կոռեին մասնակցել . պատե-
րագրին արագ վախճանը միայն այս բուռն բաղ-
ձանքին իրագործման արգելք եղաւ :

Եւ գարձեալ գերութեան դէմ հանրային
բողոքը ոչ ուրեք այնքան պերճախօս եղաւ որ-
քան Պոթոնի կանանց բերնին մէջ . եւ վերջա-
պէս կիւն մ'էր զարձեալ , Հէնրի Ուօրտ Պիլըր
որ իւր « Աղբար Թովմայի Տնակը » գրքով սրտերը
հրահրեց եւ գերութեան պատերազմին , հետեւա-
բար եւ գերութեան ջնջման ճշմարիտ պատճառը
եղաւ : Եւ այդ պատերազմը ինքնին , ինչ գերա-
զանց հանդիսավայր մը եղած է կանաչի արու-
թեան ու անձնուիրութեան : Մանրամասնու-
թեանց մէջ մտնել նիւթէս դուրս է . բայց Մրս .
Լիվըրմուր , Գլաբա Պարթըն , Լիւսի Լաթօն ա-
նանկ անուններ են որ ինքնին յայտնութիւն
մ'են եւ որ եւ է ընդլայնման կարօտ չ'են :

Գիտութեան եւ գաստիարակութեան լու-
սաւոր շաւղին մէջ եւս կիւնքը , հոս , մեծ դեր
մը կատարած են . ամ . ն բարեխորդում , ամեն
օգտակար նորութիւն իրենց գործը եղած է : Այս
ձիւղին մէջ եւս նշանաւոր անունները լէգէոն
կը կազմեն . մարդ չի գիտեր որը յիշել , որը զանց
ընել , յիշենք սակայն Մրս . Ակասիթ , նշանաւոր
բնագէտին կիւնք , իւր դուստրը , Մրս . Շօու , Միս
Էլիզապէթ Բիպոսի , Մրս . Մէրի Հէմքուէյ և

անթիւ ուրիշներ: Եւ իբր հետեւանքը այս շարժումին այսօր Ամերիկեան դպրոցական դըրուսիւնը կը նսեմացնէ բոլոր միւսները:

Ամբողջ երկիրը լուսոյ ճշմարիտ վառարան մը դարձած է. եւ արդէն դպրոց. մասնաւորապէս. լսարան. օրագիր. ամբողջ այն սկզբունքով սողորուած են որ լուսաւորութիւնը ժողովրդականացնեն, ներմուծեն զայն ընկերութեան ամեն խաւերուն մէջ:

Այս զմայլելի գրութիւնը իւր արդիւնքները տալ սկսած է արդէն. վարժարանները արտադրած են կիւնք, որոնք իրենց մասնաճիւղերուն մէջ հեղինակութիւններ ճանչցուած են. Մարիա Միչէլ, աստեղագետ մ'է. Աննա Հաւիթի քանդակագործ մը. Շարլօթ Քաշման, ողբերգուհի մը, ամերիկեան բանաստեղծութեան առաջին հատորին հեղինակը կ'են մ'էր դարձեալ, Անն Պրատըիթ. 1650 ին:

(Շարունակելի)

Պօսթոն (Ամերիկա) 4. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Գ

Նոր Կեանքի ի և Անանիոսի Անթեմի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առ ձեռք ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս դիմեն, դիւրադին զայնս գնելու:

ԱՊՈՂՈՆ ԱՌ ՔԻՈՒՍԱՆ

Վերջապէս ջանացիր եւ գրեցիր մի արար գաւեշտ. մի անտուկ կազով վարագոյր բանալի վերջ, մի եւ նոյն անտուկով ալ գոցեցիր:

Բայց գիտցի՛ր, Քիուսան, որ եթէ հանրային գործերու մէջ ուրիշ մը խանկուր քաշութիւն կ'ունենաս, պարտիս նաեւ վեհանձն գտնուիլ, քեզի ուղղուած գոնէ գնդասեղի հարուածին դէմ:

Արգահատանք բառը քուկը չէ, փոխ առած ես, « հետեւողութիւն կապկային » ըսելը չարասրտութիւն է, զի՛ բարի մարդը իր բարի սքրտէն բարի օրինակներ կը հանէ:

Իսկ ինչ որ կը վերաբերի անուանց, մենք ակն ընդ ակն եւ ատամն ընդ ատամն ըրած ենք. դուք ուրիշներու մականուանց երեք ըսկզբնատուերը անփոփոխ պահած լինելնուդ համար, մենք ալ զայն քեզ վերագործուցած ենք. բայց, հաւատացէ՛ք Քիուսան, ատանց գիտնալու որ ձեր անուան երեք սկզբնատուերը ձեզ հաճելի չ'են եղած . . .

Դուք կ'ըսէք թէ՛ ուրիշ գաւեշտ կը պատրաստէք. գաւեշտները մենաշնորհ չ'են. գրեցէ՛ք, մրցակիցներ ունեցէ՛ք, ապագայ սերունդին հասկցնելու թէ՛ Հայ աղքատ մարդկանց մըտաւորական զարգացման համար, հազար եւ մէկ դժուարութեամբ հաւաքուած ստակն առնել եւ ազնուակամաց (՝) ՍԱԼՕՆ շինելը արդարութիւն չէ կղեր:

ՉԼԶՈՒՄ ՄԸ

Առ . . . Խմբագիր « Արշալոյս » Լրագրոյ ի Գահիրէ

Տէր Խմբագիր, Ձեր անկողնակալութիւնէն կը խնդրեմ ներկայ յայտարարութեանս հրատարակումը:

Կուգամ հրապարակաւ յայտարարել թէ՛ ասկից գրեթէ երկու տարի տառ « ՆՈՐ ԿԵԱՆՔ » թերթին մէջ հրատարակուած « ՄԱՐՏԻԿ ԱՂԱ » վէպիս Դ. գլուխին մէջ Պ. եւ Տ. Կողմեան անունով տեսարան գրուած անձաւորութեանց մասին գրուածները բացարձակապէս սխալ ու կեղծ են, ագիտութեան, անփորձութեան, անգիտակից կոչութեան ու գրական « ճՍՍԱ » ի միայն արդիւնք, թէ՛ զանոնք գրելէս անմիջապէս ետքը՝ զղջացած եմ. եւ թէ՛ յանցանքիս մեծութեան գիտակցութեանէն եւ խղճի խայթիս անհանդուրժելի սասակութենէն գրուած է որ ինքնաբերաբար, կամաւորապէս եւ ամենայն

անկեղծութեամբ կուգամ հռչակել հասարակութեան առջեւ թէ՛ ետ կ'առնեմ այդ տողերը, կը ջնջեմ զանոնք գործէս, չ'եղեալ կը համարեմ այդ անձաւորութեանէն՝ զորս յետոյ մօտէն ճանչնալու առիթը ունեցած ըլլալով այժմ կը համամարիմ Աղէքսանդրիոյ ամենէն պատուաւոր, ամենէն աւելի համակրութեան եւ յարգանքի արժանի հազուագիւտ ընտանիքներէն մէկը:

ՊԱՐՈՅՐ

Աղեքսանդրիա 18 Սեպտ. 1900

Յ. Գ. Այս գրութիւնը կ'ուղղուի նաեւ բոլոր անոնց որոնց ալ անձնասիրութեան անուղղակի կերպով կրնամ գրած ըլլալ վէպիս մէջ նոյն.

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

ԱՌ Պ. Սմբատ Բիւրատ Տէր Ղազարեան, Լսարան Ընթերցատուն Ընկերութեան նախորդ Գործադիր Ժողովոյ Ասենապետ:

Նոր-Օրի 30 թուոյն մէջ կը տեսնեմ Կիրակէն գանձուած 15 դրջ. նուէրի մասին տրուած սխալ բացատրութիւննիտ նաեւ ԲԱՐՈՅԱԿԱՆ Ի(1) ակնարկ մը ընկելու ըմբոստութիւննիտ:

Կը յուսամ որ քիչ օրէն փաստերով եւ ապացոյցներով առիթ պիտի ունենամ ձեր բարոյականի մասին լուրջ տեղեկութիւններ հրատարակել:

Իսկ յիշուած նուէրի մասին կը փութամ կրկնել թէ՛ Կիրակէն գանձածս ո՛չ թէ միայն 15 դրջ. է, այլ 29 դրջ. է բաժնեկիրն մը եւս կայ Սարգիս Աղա Իսկէնտէրեանէ, որոց երկուքը մէկ անգամէն նամակաւ մը հաղորդուած էր Գործ. Ժողովոյ. (կը վախնամ որ այս նամակըն ալ ասորիւ 28 ին ստացած ըլլաք եւ կամ բոլորովին չէք ստացած - ինչպէս չէիք ստացած Մայր Դիւանի մի նամակն ալ. . . եւ շատ չեմ տեսներ ձեզի ասանկ կերպեր:)

Ուրեմն ի՞նչպէս 29 դրջ. բաժնեկիրը հաշուելիութիւն մէջ կանցնի, եւ ժամանակին ընկալագիրը կը զրկուի ու միայն 15 դրջը դուրս կը մնայ:

Գահիրէ հասնելուս Գործ. Ժողովոյ կողմանէ ձեր ստորագրութեան տակ ինձ ուղղեալ մի նամակը պիտի հրատարակեմ, որը արդէն բաւական է խնդրը լուսարանելու:

Կը յուսամ որ ատանց պատասխանի չէք թողուր ներկայս՝ ինչպէս ատանց պատասխանի մնացած են « Արշալոյս » ի 81 թուով յօդուածիս միւս բոլոր մասերը:

Աղեքսանդրիա 20 Սեպտ. 1900 Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ:

(1) Պ. Սմբատ Բիւրատ, ինչպէս արդէն ըսուած է եւ հաստատուած իրողութիւն է, սովորութիւն ունի իր եւ իր մէկ քանի ընկերներուն չ'ունեցած բարեմասնութիւններուն վրայ ճառել եւ իբր ստոյգ ընթերցողաց կ'ընթերցելու ջանալ: Այս ընթացքը իրեն համար ԱՄՕԹ սեպած չ'է, եթէ երբէք ԱՄՕԹ բաւին գոյութիւնը կը խոստովանի եւ կը հաւատայ իրեններուն հետ:

Եւ միթէ ասոնց կարգէն չ'է՞, ժողով անուան տակ՝ ի մի վայր հաւաքուած քանի մը հոգիներու բերնին մէջ ՇԻՆՄՈՒ և յիւրիւրուած խօսքեր գնել և « Սեպտ. 9 ի նիստը » անունով հրատարակել:

Տ. Խմբագիր, սովորութիւն ունիք իրողութիւնները գրաւորապէս հաստատել, ինչպէս ըրած էիք այն դումարման մէջ. կրնա՞ք մինչև վաղը առաւօտ՝ նոյն օրուան նախագահին հետ, ձեր հրատարակած նստի արձանագրութիւնները, հոն հաւաքուած անդամներուն կողմէ քննուած և վաւերացուած մեզ ներկայացնել: Եթէ այս չ'հաստատէք և ես՝ բառ առ բառ ձեր հրատարակածները

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 15 սեպտ. — Նախագահ Քրիկէր արգելքի տակ առնուեցաւ Բորթուկալի կառավարութեան կողմէն: Զրոյց կը պարտի որ Անգլիացուց պիտի յանձնուի: Լոնտոնի թերթերը կ'ըսեն թէ՛ Բորթուկալ չի ընդգիմանար անոր մեկնելուն, այլ Թրանսվալի հետ բանակցելուն:

Լոնտոն 17 սեպտ. — Շանկհայէն Սրանսարս կ'իմանայ որ անգլիացի սպաներուն Ռուսերու կամ ձաբոնցիներու ստորագաս ըլլալը գէշ ազդեցութիւն կ'ընեն հնդկական ջորագունդերու մտքին վրայ:

Լոնտոն 17 սեպտ. — Թայլը Գէյթաուենէ կ'իմանայ որ Պ. Քրիկէր կը յայտարարէ թէ՛ Լորտ Ռօպըրթսի (միացման) յայտարարութիւնը փոճ է և ապարդիւն:

Լոնտոն 19 Սեպտ. — Կը կարծուի որ Մեծն Բրիտանիա և Դերմանիա կատարեալ համաձայնութեամբ կը գործեն Չինական խնդրոյն մէջ: Ռուսները գրաւած են Մանչուրիի երկաթուղոյ ամբողջ գիծը:

Պրիւքսէլ 19 Սեպտ. — Կը լսուի որ Պ. Քրիկէր Տէրութեանց պիտի ներկայացնէ ծրագիր մը, որուն համեմատ երկու Հանրապետութիւնք իրենց ինքնավարութիւնը պիտի պահեն՝ Անգլիոյ գերիշխանութեան տակ:

Լահէյ 19 Սեպտ. — Պ. Քրիկէր ընդունեց Հօլանտայի առաջարկութիւնը, որ էր՝ զինք յեւրոպայ փոխադրել Հօլանտական մարտանաւով մը:

Լոնտոն 20 սեպտ. — Բորթուկալի կառավարութիւնը Թրանսվալ վերագտնալ չ'իթոյլարեբր այն Պօէրներուն, որոնք վերջերս սահմանն անցած էին:

Դաշնակիցները սաստկապէս կը ուրախուծեն Բէի-Թանիկ բերդերը, Թագուի հիւսիսային կողմը: Կէյսէրյանս յաճախակի Բէրիմէն մեկնեցաւ Պ. Քրիկէրը Հօլանտա փոխադրելու համար:

Լորտ Ռօպըրթս կը հեռագրէ թէ Պօէրներու բանակը ցիր ու ցան եղած է:

ԻՔԵՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

Հ Ա Յ Դ Ե Ր Չ Ա Կ ԱՐԱՆՑ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ Նուպար Փաշա Փոքոց Թիւ 24

Կը յայտարարէ թէ՛ արհեստին ամեն նըրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու, այս սնգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրախն գիմացը, նոր շինուած խանութներուն մէջ:

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նըրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ պտնելով, եւ մասնաւոր՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան. ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով:

Ներկաներէն ստորագրեալ չ'տեսնեմ, հրապարակաւ և միշտ իրաւունք պիտի ունենամ ըսելու թէ՛ դուք հոն հաւաքուողներուն վստահութիւնը չարաչար գործածած էք, և սովորութիւն ունիք միշտ այնպէս վարուելու. և կամ՝ անոնք խելամուտ չ'են այլ նըրբաթիւնները ըմբռնելու, ինչպէս որ նոյն դումարման նախագահը երբեմն. . . ուրիշ խնդիրներու մէջ ըմբռնել ուղած չ'է:

Ե. Թ.

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՐԲԻՅԷ ՇՈՒԿԵՆԱՆԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻԱՆ

Ուրիշ էր և Հավասար գործակալութիւնը կը ծանուցանեն խորհիւն Ընկերութեան Շարքիյն անուն շոգեհաւուն ընկերը : Հասկա կը յաւելուր թէ շուրջ հարիւր հոգի կորսուած են :

Ահաւասիկ այս մասին ընկերութեան կողմէ տրուած տեղեկութիւնը :

« Ընկերութիւնը ցաւ ի սիրտ կը ծանուցանէ յարգոյ հասարակութեան թէ՛ Շարքիէ շոգեհաւը , երբ Պիրիօնէն Կ . Պօլիս կ'երթար , սաստիկ մորիկէ մը կայմը կորսնցոյց և ալեաց դէմ հինգ ժամ մաքառելէն ետքը Անտրոս կղզոյն մօտ խորեցաւ : Հելլէնական կառավարութիւնը օգնութեան փութացուց միջառնաւը , և էլ-Գահիտի շոգեհաւը երեկ մեկնեցաւ այս պատճառաւ , և ուղղակի Անտրոս գնաց : Կը վախցուի որ մարդու կորուստ կայ , բայց ընկերութիւնը մանրամասնութիւն չ'ստացաւ տակաւին :

Հետեւեալները Աղէքսանդրիայէն մեկնած են Պիրիօնէն անդին նաւահանգիստներուն համար .

Առաջին կարգ . ո՛չ ոք :

Երկրորդ » Տիկին Սորբանիչ և

» » երեք մանուկ :

» » Իգլալ Հանրմ

Երրորդ » վեց անծանօթ անուններ Կ . Պօլսոյ համար :

Չգիտցուի թէ Պիրիօնէն քանի ճամբորդ նաւ մտած էր , բայց տարւոյն այս եղանակին բազմաթիւ ուղևոր չ'գտնուիր սովորաբար :

Շարքիի նաւագետն էր Սորբանիչ 45-46 տարեկան , և 20 տարեկ աւելի ընկերութեան ծառայութեան մէջ : Իր ամբողջ ընտանիքը նաւուն մէջն էր :

ՆՈՐԱՏԵՍԻՒԼ ԱՆՁԻՐԻՒՄԸ . — Յօդուածներու տեղատարափ մ'ունի այս օրերս մեր իմբադրատունը :

Դժբաղդաբար « Արշալոյս » ի սիւնակները անբաւական են գոհացում տալ յարգոյ

յօդուածագրերու միանգամայն : Աստի ըստիպուած ենք հոս նշանակելու , հետզհետէ հրատարակելու խօսառումով :

Այս շաբթու մէջ լոյս տեսաւ « շաբթի թէ կիրակի » անունով տետրակ մը , որ մեծակալ ալմուկ հանեց և որու մասին մինչեւ այսօր ստացանք չորս գրութիւններ :

« Նոր-Օր » ի վերջին թիւը ընթերցողներէն ոմանք հոն տեսած են խեղաթիւրուած կամ յոտից ց'գլուխ հնարուած . . . բաներ , զորոնք պատուելու համար ստացանք Տիար Գ . Գրիգորեանէ երկառոյ մը , զոր այսօր կը հրատարակենք . և Տիար Ե . Գրիգորեանէ խիստ ուշադրաւ և ընդարձակ հերքմանգիր մը , որուն հրատարակութեան պիտի ձեռնարկենք մեր յաջորդ թուով :

Ատոնցմէ ետքը « Արշալոյս » ի Տնօրինութեան կողմէ անձ մը պիտի նուիրուի « Նոր-Օր » ի խմբագրի բերնին , որուն չափը առնուած է արդէն շատոնց ի վեր :

— Առաջի օրը հրդեհ ծագեցաւ Նուպրա . հրէջներն իսկոյն հասան և կէս ժամէն տիրացան բոցերուն :

— Մահմուտ Տամատ փաշա ձեռնը Գահիտէ պիտի անցնէ , և յետոյ պիտի ճամբորդէ դէպի վերին Եգիպտոս :

Անցած օր կէս օրէն ետքը Ն . Բ . Խտիվը Մօնթաղայի պալատէն տեսաւ կիպրացի փոքր առագաստանաւ մը որ կորսուելու վրայ էր փոթորկայոյզ ծովին վրայ :

Ն . Բարձրութիւնը իսկոյն հրամաններ տուաւ և Պալատին նաւաստիները օգնութեան փութացին ու բարեբաղդութիւն ունեցան վտանգուած նաւազը ազատելու , յետ որոյ նաւը անհետացաւ ալիքներուն մէջ :

Յիշեալ նաւուն բեռն էր 1000 քաշ խաղող և 1500 քաշ նուռ որոնք կորսուեցան ամբողջապէս . բայց Ն . Բ . Խտիվը նաւազը միթիարեց , մեծ դումար մը տալով անոր :

— Մահմուտ փաշա Տամատ , Մօնթաղայի պալատին մէջ Ն . Բ . Խտիվին հետ նախաձեռնեց անցեալ երեքշաբթի :

— Կ . Պօլսէն Սեպտ . 13 թուականաւ Բրոկիէ հեռագիր մը կը հրատարակէ հետեւեալ պարունակութեամբ :

աչքերուդ կայլակները փարստէ , անցի՛ր հըրոսակի պիղծ երկիրներէն , պատրաստուէ՛ , Հայաստան պիտի մտնես :

Քալէ՛ ո՛վ Հայ , համարձակ նետէ քայլերդ , Սուրբ երկիր է այն , բայց զգուշացիր ճամբէդ չնկիտ . քալէ՛ , վեր ել՛ ամենաբարձր կատարը , անիկա Մասիս լեռն է , ամիտիէ ինքզինքդ , ուշքդ վրադ բե՛ր , Հայաստանի մէջն ես , բա՛ց աչքերդ , լայն բաց ու չորս կողմդ ուշի ուշով դիտէ :

Տե՛ս թուրք խուժանի ստուար խուճերը ի՞նչպէս դուրս կը խուճեն մզկիթներէն . լսէ՛ ա՛նոնց ոռնումները , « սալավաթի » խոսքոտ ձայները : Տե՛ս թուրք զօրքերը , իրենց անգլխական հրացաններու պայթիւնները օդը կը զղրդեցնեն և ամեն մէկ պայթիւնի հետ կեանք մը կը նուաղի : Նայէ՛ , ասդին գոժան թիւրքերու խոսքի-ճաղանճ բազմութիւնը , մէկը փայտը վերուցած , միւրը երկաթեայ լախաւը , սա բրիչով կը վազէ , անիկա բանով , ասդին սուրերով կ'ըլտապեն , անդին քարերով :

Հոս՛ կացիներու հարուածներուն տակ դռները կտոր կտոր կ'ըլլան , հոն՛ սալերու վրայ մուրճերու հարուածներով անխղճաբար Հայ գըլուխները կը ճգմեն : Հոս՛ ատրճանակներու պայթիւնը կը լսուի , հոն՛ շեշխաններու բղբնը , հոս՛ հրդեհը կը լափէ կը լափիղէ խառութիւնն ու տները , հոն՛ ինչքերը աւարի կ'երթան , հոս՛ անբիծ հարսերը կը պղծուին , հոն՛ անարատ

« Կը վախցուի թէ Սեպտ . 23 ին ցոյց մը պիտի կատարուի հայերու կողմէն :

Նախագգուչական շատ մը միջոցներ այժմէն ձեռք առնուած են :

Գիշերապահ հեծելազուգը ամբողջ գիշերը կը շրջի փողոցը :

Բերայի մէջ հայու մի տունը խուզարկուած և վեց անձեր ձերբակալուելով շատ մը թուղթեր ալ գրաւուած են :

Կ'ըսուի թէ՛ Աղեքսանդր Կարապետեան անունով Պետ մը կը գտնուի պոլսոյ մէջ , բայց ստիկանութիւնը գեռ չ'է կրցած զոյն ձեռք ձգել » :

(Մ . Խ , եթէ այս տարածայնութիւնը Սուլթանի և իր վաստ պաշտօնէից կողմէ . . . հնարուած չ'է , վախնալու բան չ'կայ . . .)

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՅ ԺԱՄԱՅՈՅՅԻ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ , կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երայխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ . Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօլի բազմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գոգորաֆիներու :

187րդ . ՎիճԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՔՐԷՏԻ ՅՕՆՍԻԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ

15 Ապրիլ 1900

Table with 5 columns of numbers: 6889 82142 140855 228467 348622, 20817 85933 142682 278935 349622, 44156 92561 144558 300506 374736, 55411 95232 168265 318118 382166, 62910 139872 173898 321482 387152

Սոյն վիճակահանութեան պարգևներու վճարումը պիտի սկսի 1 Հոկտ . 1900 .

կուսանքները կ'առեանգուին , հոս՛ փոքրիկ երախաները կը կարուին , երկուքի կը բաժնուին , հոն՛ մանուկներու գլուխները սուխներու ծայրերը կը բարձրանան . հոս՛ մամիկներու ստիկները կը կտրատեն , հոն՛ ուրիշները թեւազուրկ կ'ընեն :

Հոս՛ կազի մէջ թըջուած Հայեր կը վառեն , այս ու այն կողմ կը ցատկուտեն , կը խաղան կարմիր բոցերուն մէջ , կը կանչեն կը կանչուրուտեն , օգնութիւն կը պօսան ու . . . կ'ազօթեն : Մարդիկ անկարող ու անհամարձակ օգնելու . Աստուած երեսը դարձուցեր ու չը նայիր . անոնք կը վառին ու ածուխ կը դառնան : Ասդին՛ տասնեակներով Հայեր կը գլխատուին , անդին՛ սուխներու բաժին կ'ըլլան : Ասդին Հայ մը կոթողէն վար կը նետեն , անդին բարձրաբերձ պարիսպէն գլխիվայր կը գտնուի թե՛ն :

Հոս՛ թշուառ Հայեր կացիներու եւ սուրբերու շողիւններուն տակ ոգեպատ կ'իյնան , հոն՛ հրաշէկ զնդակներ ուրիշներու կուրծքերը կը ծակեն ու դուրս կը սուրուն թիկուռքէն , անոնք դիպիտաւ արեան հեղեղներու եւ լճերու մէջ տապալակելով , վերջապէս այն տխուր սքստմիտի վիճակին մէջ հոգիին կ'աւանդեն : Այսպէս , հուրն ու սուր , կացիին ու հրացանն ճնոք ձեռքի տուած աւեր կը սփռեն աշխարհի չորս դին :

(Շարունակելի) Նիւ Եօրք Ս . Կ . ԱԼԻՓՈՒՆԱՐԸՆԱՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Խ Ի Ղ Ճ Դ Ք Ն Ն Է

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Բայց դու , ո՛վ Հայ , արտասուելից եւ կիսարաց աչքերով ակնարկ մը ձգէ այդ բոլորին վրայ ու մի՛ սքանչանար . ինչու որ անիկա ալ գործեց ոճիւրը : Կատողեցաւ իր խորխոր անգունդէն , մեծ բացաւ բերանը , չը խնայեց Աստուած մարդուն իսկ , կլլեց ու դերեզման դարձաւ Հայերու արդար խմբի մը :

Մի՛ լար , ո՛վ Հայ , անցի՛ր Հայակուղ ուղիիսնէն , պահէ՛ արտասուքդ , աւելին կայ . հայրենիքի որբերը պիտի գան ու պուտ մը արցունք փնտռեն ցամքած աչքերուդ մէջ . պահէ՛ , գէթ մի քանի չիթեր նուիրես անոնց սիրասուն ծնողաց անմահ յիշատակներուն :

Յառաջ քալէ՛ , մտի՛ր քաղաքներու թագուհի Բարբըր , մի՛ բանար աչքերդ , մի՛ դիտեր անոր ապշեցուցիչ ու հրաշալի տեսարանները , զի մաս ու բաժին չ'ունիս հոն : Դուրս ելի՛ր , քալէ՛ , մի՛ նայիր Եւրոպայի կարմրած սանմաններուն , անցի՛ր Միջերկրափանի լայնատարած ծովըն ալ , կանգնէ՛ հոն , ամուր բռնէ ինքզինքդ . ծնկներդ թող չ'ողողան , սիրտդ չ'ալեկոծի , Հայաստանը աւեր ու անապատ դարձնող Սուլթանի երկիրն է այն : Մի՛ թուլանար , քալէ՛ ,

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՄՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պայտին եւ Նուագաժողովի խմբի
Զորանոցին ճիշտ դիմացը

ՕՂԱՆՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ ԵՒ
ԳԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան դիմել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարդարած և յաճախորդաց հանգիստը ի նկատի ունենալով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ դրած է :

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները ընտիր և թարմ՝ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Մանաւոր խնամքով կը պատրաստուին ան և մրգաթան և չամչարակ (խոշապ) :

Հոն դիմող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան :

Ա Ջ Դ

Քղիի Օրոր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Եանօեանի որդի Պ. Կարապետ Եանօեան 26 ամեայ երիտասարդը Հայալինջ դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէական ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին յանոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նշմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա Ջ Դ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ 16 հոգիէ բաղկացեալ ՔՆԱՐ անուն ընկերութիւն մը կազմած եմ որուն նպատակն է, Գահիրէի մէջ երաժշտական երեկոյթներ սարքել, հայկական և եւրոպական եղանակներով :

Ուստի այս առթիւ պարտք կը համարիմ հրաւիրել այն ամեն ազգայինք որոնք կը փափաքին անգամակցիլ սոյն նորակազմ ընկերութեանս, և կրնան իրենց անունները արձանագրել տալ ի Պաշար-Մուրուր Լսարան-Ընթերցատան յարկին մէջ :

Երաժշտապիտ
Գահիրէ ԽԱՉԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ
21 Սեպտ. 1900

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻՆԻ ԱՋԻՁԻ ՍԿԻՁԲԸ
Օսկանիյի դեղատանին դիմացի փողոցին մեջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարտականներ, Գիրքեր, Հրատարակութիւններ, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագրներ, Տոմարներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չարաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և խնայողական երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղուներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

ՀԱՅ ԶԱՇԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԱՐԻ ԳԱՋԱՆՃԵԱՆ
ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍՍԱՊԱՀ

Նեով. — Իւնիսիւսի դեղատանին դիմացը

Որ և է կերակուր արտօժանած և սընընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համըմամբ ոչ անդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր արտօժակին թշնամանանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին :

Գիններն ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ԵՆ.

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄՆԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն և եւելի շահարաժիհները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար և եւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԻԳահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԵԱՆ

Ի Շարեա Գլոբ-Պէյ, թիւ 20

Իր ՁՐԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրախ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ ի գիտութիւն իրեն դիմել ուղղող աղքատ հիւանդներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Երբունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան վեճերով Փորձան ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

6675	942	9341	8469	6102	8485
6842	7071	4961	9214	7403	1502
3649	586	8441	8744	5291	6892
2435	5658	1613	8009	4323	904
	4724	1521	7102		

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՌՈՅԺ
Ապսիւն Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաներ :

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուպիցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ և եւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ և եւելի ապահովագրութիւններ ունի և և եւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Աղէքսանդրիա :